Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11002/23-ԾԳ» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Գյումրի) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/23-ԾԳ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2023 - 31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 03.01.2023 - 31.12.2023 |
| Ներկայացման օր | 09.01.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Հերմինե Գասպարյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրի շրջանակներում «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ը պլանավորել էր իրականացնել հետևյալ գործողությունները.

- Շահառուների կարիքի խորքային գնահատում և կիսամյակային վերագնահատում
- Ըստ կարիքի գնահատման՝ անհատական սոցիալական ծրագրերի կազմում
- Կենցաղային սպասարկում
- Բժշկական օգնություն և սպասարկում
- Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն
- Մշակութային միջոցառումների կազմակերպում
- Սննդի, հիգիենիկ պարագաների և առաջին օգնության դեղորայքի տրամադրում
- Կոմունալ վարձավճարների փոխհատուցում:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ծառայություններ են մատուցվել ընդհանուր առմամբ 84 շահառուի: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է ծրագրում ներգրավված շահառուների կարիքի գնահատում՝ կիրառվելով կազմակերպության կողմից մշակված կարիքի գնահատման ձևաթուղթը: Գնահատված կարիքներին համարժեք յուրաքանչյուր շահառուի հետ կնքվել է սոցիալական ծառայությունների մատուցման պայմանագիր: Կարիքի գնահատումից հետո բազմամասնագիտական թիմի կողմից յուրաքանչյուր շահառուի համար մշակվել է Անհատական սոցիալական ծրագիր, որի հիման վրա իրականացվում է շահառուի խնամքը:

Շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան իրականացվել է խնամքի ծառայությունների տրամադրում, մասնավորապես՝

**Կենցաղային սպասարկում**

Շահառուներին տրամադրվել է սոցիալական խնամողի ծառայություններ, ով տնայցերի ընթացքում իրականացրել է շահառուի խնամք, տան մաքրում, շահառուի լողացում, մազերի և եղունգների հարդարում, անկողնային պարագաների փոխում, հագուստի փոխում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուների լվացքը տեղափոխվել է կենտրոն, լվացվել, արդուկվել և հաջորդ այցելության ժամանակ հետ է վերադարձվել շահառուին: Այն շահառուների լվացքը, որոնք իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոց.խնամողների կողմից կատարվել է շահառուի բնակարանում: Սոցիալական խնամողի կողմից հիմնականում տնայցեր են կատարվել Ա խմբի շահառուներին օրական 2 անգամ՝ 1-ական ժամով և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2 անգամ՝ 1-ական ժամով: : Ըստ շահառուի կարիքի և տարբերի իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:
Ծրագրի շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների և կոմունալ վճարների շնորհիվ շահառուն ապահոված է իրեն անհրաժեշտ ապրանքներով և կոմունալ ծառայություններով, որի իրականցման կատարողականը ամրագրվում է ծառայությունների մատուցման ստուգաթերթում և շահառուի ստորագրությամբ՝ շահառուի մոտ գտնվող ծառայությունների տնային թերթիկում:

**Բժշկական օգնություն և սպասարկում**

Բուժքույրն իրականացրել է տնայցեր շահառուներին, որի ընթացքում ստուգվել է առողջական վիճակը, իրականացվել է արյան ճնշման, արյան մեջ շաքարի մակարդակի չափում, ըստ անհրաժեշտության կատարվել են ներարկումներ, վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, տրամադրվել է բուժման, ինչպես նաև դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվություն՝ ընտանեկան բժշկի հետ համագործակցությամբ: Կատարվել է ուղղորդում դեպի պոլիկլինիկաներ առավել բարդ հետազոտությունների կատարման համար: Բուժքույրը խորհրդատվություն է տրամադրել նաև շահառուներին և նրանց օգնող անձանց՝ առողջապահական թեմաների շուրջ: Բուժքրոջ կողմից իրականացվել են այցելություններ Ա խմբի շահառուներին շաբաթական

առնվազն 2 անգամ և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական առնվազն 1 անգամ: Ըստ շահառուի կարիքի և տարբեր իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր: Այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում: Տարեցների առողջական վիճակը պահպանվում և բարելավվում է հրատապ ու առաջնային անհրաժեշտության դեղամիջոցների տրամադրման շնորհիվ:

**<u>Սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն, ուղեկցման ծառայություններ</u>**

Սոցիալական աշխատողը մշտապես շահառուների կողքին է ցանկացած թղթաբանություն կազմակերպելու կամ սոցիալական ոլորտին առնչվող խորհրդատվություն ստանալու կարիքի դեպքում: Սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շահառուների փաստագրում անապահովության գնահատման համակարգում: Դեղորայքի ստացման համար սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շահառուների անապահովության միավորի տեղեկանքի ստացում, որով բուժքույրերը դեղատներից ստացել են պետության կողմից հատկացվող անվճար դեղորայքը՝ ըստ դեղատոմսերի: Ողջ տարվա ընթացքում սոցիալական աշխատողի կողմից 84 անգամ կատարվել է շահառուի ուղեկցում ՄՍԾ, իրականացվել է նաև շահառուների փաստագրում անապահովության գնահատման համակարգում:

32 անգամ կատարվել է նաև շահառուների ուղղորդում կամ ուղեկցում համայքապետարան, մարզպետարան կամ այլ պետական կառույցներ, օժանդակութուն աջակցության դիմումների լրացման գործում:

Կիսամյակը մեկ անգամ իրականացվել է նաև շահառուների կարիքի **վերագնահատում և մատուցվող ծառայություններից բավարարվածության չափում**: Վերագնահատման արդյունքում փոփոխություններ են իրականացվել անհատական սոցիալական ծրագրերում: Իսկ բավարարվածության գնահատման արդյունքները ցույց են տվել, որ շահառուները գոհ են աշխատակիցների այցերի հաճախականությունից: Աշխատակիցները բարեխղճորեն են կատարում իրենց աշխատանքային պարտականությունները: Այցերը կատարում են ըստ ժամանակացույցի, կարիքի դեպքում՝ նաև արտահերթ: Շահառուները գոհ են աշխատակիցների խնամքից, ուշադրությունից, հոգատար վերաբերմունքից, ցուցաբերվող հարգանքից:

**<u>Մշակութային միջոցառման կազմակերպում</u>**

Շահառուների հասարակական կյանքը ակտիվացնելու նպատակով կազմակերպվել են տարբեր միջոցառումներ.

- Սուրբ Սարգսի տոնին ընդառաջ ծրագրի շահառու տատիկները աղաբլիթներ են պատրաստել և իրենց օրհնությամբ ծրագրի աշխատակազմի միջոցով բաժանել երիտասարդներին:
- Մարտի 30-ին Տնային խնամք ծրագրի 10 շահառուներ ծրագրային թիմի ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել են Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան: Նրանք մեծ բավականությամբ ծանոթացել են ցուցանմուշներին և լսել էկսկուրսավարի ներկայացումը դրանց մասին: Մայիսի 11-ին շահառուների համար կազմակերպվել է զբոսանք, որի ընթացքում կատարվել է նաև այց II համաշխարհային պատերազմում

զոհված զինվորների հիշատակի հուշահամալիր: Շահառուները ծաղիկներ են դրել և պատմություններ պատմել պատերազմի մասնակիցների մասին:

- Հունիսի 3-ին ծրագրի շահառուները մասնակցել են ցուցահանդես վաճառքի, որի ընթացքում ներկայացվել է նաև նրանց ձեռագործ աշխատանքները: Միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից իրականացվող «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագրի շրջանակում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Միասնական սոցիալական ծառայության հետ համագործակցությամբ:
- Հունիսի 28-ին Հայկական Կարիտասի Գյումրու Տարեցների ցերեկային կենտրոնում հյուրընկալել էին «Հնաբնակ Երևանցիներ» ասոցիացիայի «Աշնանային ձայներ» երգչախմբին /խմբավար՝ Աստղիկ Խաչատրյան/: Երգչախմբի կատարմամբ հնչել են սիրված երգեր՝ կոմիտասյան և ժողովրդական ստեղծագործություններ, ինչպես նաև 20-րդ դարի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Միջոցառմանը մասնակցեցին նաև Տնային խնամք ծրագրի շահառուներ:
- Տարեցների միջազգային օրվան ընդառաջ կատարվել են այցելություններ տարեցների բնակարաններ, շնորհավորել տարեցների օրվա կապակցությամբ, հանձնել նվերներ: Աշխատակիցների անակնկալ այցերը ուրախություն են պարգևել միայնակ տարեցներին՝ կտրելով նրանց միապաղաղ առօրյայից:
- Կարևորելով սերունդների միջև կապը և տարեցների ինտեգրումը հասարակություն, կազմակերպվել է խոհարարական աշխատարան: Մի քանի ժամվա ընթացքում տարեցներն իրենց խոհարարական հմտությունները փոխանցել են երիտասարդներին՝ համատեղ պատրաստելով կերակրատեսակներ: Միասին պատրաստված կերակրատեսակները միասին ճաշակել են՝ արարողությունը համեմելով հումորով, կատակներով և զվարճալի պատմություններով:

Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով: Մշակութային միջոցառումները նպաստում են, որ շահառուները դուրս գան մեկուսացումից և իրենց հասարակության լիարժեք անդամը զգան:

**<u>Սննդի, հիգիենիկ պարագաների տրամադրում</u>**

Հաշվետու տարվա ընթացքում շահառուներին հատկացվել են չոր սննդի տարրողունակ փաթեթներ: Շահառուներին հատկացվել է նաև անկողնային պարագաներ, սրբիչներ, գիշերազգեստներ: Արդյունքում մեղմվել է շահառուների սոցիալական կարիքը:
Տարեցների բնակարանների ջեռուցում և նրանց համար տաք ձմեռ ապահովելու նպատակով իրականացվել է կոմունալ վարձավճարների փոխհատուցում՝ ձմռան ամիսներին:

Ամսական 2 անգամ կազմակերպվել են աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Ծրագրային թիմի կողմից շահառուների համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների, անհրաժեշտ

սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, դեղորայքի, սննդի և հիգիենիկ պարագաների հասանելիություն:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Սուրբ Սարգիսի տոնին նվիրված նախաձեռնություն-
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0x3Z51dWQ73MppiyAUY4yS4hcL5GaZSzU6YevQJEJwG8xr9uyDt4zSCnueAxryTG9l
Առաջին օգնության դասընթաց անձնակազմի համար –
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0nzUKvSP6Luwnkk9iPomRzp11DkzA2FiL5U5dDiin2MdDfTo4NfZBj4KF34z68T4Hl
Շահառուների ձեռքի աշխատանքների ցուցադրություն-վաճառք -
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0DHE2Q6NFZdoHGYC5D951wZDkT38Pp92SERNknjkorND44oZ5egw2Ra8rwivC7AEJl
Տնային խնամք ծրագրի ռազմավարական պլանավորում –
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02HtF5KdS9qKaeB9acRqHc4WW9iDepPKoFab4zr4BGHFaduswLy6jcwT3q1PenCAexl
Հայկական Կարիտասի տարեցների խնամքի ծրագրերի վերաբերյալ ինֆոգրաֆիկա, որոնք իրականացվում են ԱՄՀՆ դրամաշնորհների շրջանակներում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0PuPXcnDoG8hkCw2HHQiLzyGv1mtQKoLJFYzFjn3baHvcbdYYEPjZWkztXbghUkgGl
Տնային խնամք ծրագրի մասին հաղորդում Հանրային ռադիոյում

Տարեցների միջազգային օր՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid034TC3kXiFQGL6pr33UASDaq2yJgaWAyXdyDQ24djDerCRdcc2t9EQSrKYgsai4fEGl

Բժշկական քոլեջների ուսանողների համար կազմակերպված դասընթացներ՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02z14XkB8CXm1ofS13dVf7Bn8Z861qhDhsttDLchuohA4zgJ7MULVqVBB3dKcX7tY7l

Այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքի վերաբերյալ հավաքվում և պահպանվում է անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները:
Տարվա ընթացքում 4 եռամսյակային հաշվետվություններին կից ներկայացվել են ինֆոգրաֆիկաներ, հաջողության պատմություններ, նկարներ:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Քանի որ շահառուները Ա կամ Բ խմբի են, նրանց հիմնական մասը դժվարությամբ է տեղաշարժվում, հատկապես ձմռան ամիսներին խուսափում են տնից դուրս գալ, այդ իսկ պատճառով կազմակերպված միջոցառումներին քչերն են մասնակցում: Այդուհանդերձ

ծրագրային թիմը փորձել է տարեցներին հնարավորինս ներգրավել միջոցառումներին կամ տոնական օրերին լրացուցիչ այցեր կազմակերպել նրանց բնակարաններ:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

| |
|---|
| Ծրագիրն ավարտվել է դեկտեմբերի 31-ին: |

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

**Սեմինարներ, վերապատրաստումներ, հանդիպումներ**

- Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի սոցիալական աշխատողը մասնակցել է Միասնական Սոցիալական Ծառայության Գյումրու տարածքային կենտրոնին կից Վանաձորի համակարգող խորհրդի ամսեկան նիստերին՝ որպես խորհրդի անդամ: Քննարկվել են նպաստառու ընտանիքներին պետության կողմից հատկացվող սոցիալական օժանդակության հետ կապված ընթացիկ հարցեր:
- Ծրագրի բուժքույրերը սոցիալական խնամողների համար կազմակերպել են 1-ին օգնության դասընթաց: Տեսական և գործնական աշխատանքի միջոցով ծրագրի աշխատակազմն ամրապնդել է 1-ին օգնության գիտելիքներն ու հմտությունները՝ մասնավորապես ուշաթափությունների, անկումների, վնասվածքների, այրվածքների դեպքում:
- Ծրագրի բուժքույրերը մասնակցել են Ավստրիական Կարիտասի կողմից կազմակերպած «Պալյատիվ խնամք», «Վերքերի մշակում» թեմաներով դասընթացի:
- Բուժքույրերը մասնակցել են նաև «Խնամքն այրվածքների դեպքում», «Խնամքը սրտամկանի կաթվածից հետո» թեմաներով տեսական և գործնական դասընթացին, որը վարել են ԱՄՆ, Հյուսային Կարոլինա նահանգի Քեմփբել համալսարանի մասնագետները:
- Հունիսի կայացել է Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի Տնային խնամք ծրագրի ռազմավարական պլանավորման հանդիպում, որին մասնակցել է նաև ԱՍՀՆ Տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Հայկ Հարությունյանը, ներկայացուցիչներ ոլորտի ակտիվ դերակատար գործընկեր կառույցներից:
- Հուլիս 10-11 ծրագրի սոցիալական աշխատողը մասնակցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Word Vision, USAID կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացված սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացին:
- Սեպտեմբերի 22-ին Շիրակի պետական Համալսարանի «Սոցիալական աշխատանք» բաժնի 3-րդ կուրսի ուսանողները, դասախոս Աշխեն Տոնոյանի ուղեկցությամբ, այցելել են Հայկական Կարիտասի Գյումրու Տարեցների խնամքի կենտրոն: Տնային խնամք ծրագրի սոցիալական աշխատողը ներկայացրել է ծրագրի գործունեությունը, մատուցվող ծառայությունները և սոց. աշխատանքի առանձնահատկությունները:
- Հոկտեմբերի 19-ին ծրագրի բուժքույրերը և սոցիալական աշխատողը մասնակցել են «Խնամք խնամողների համար» հոգեբանական դասընթացի:
- Մայիս և հոկտեմբեր ամիսներին Գյումրու պետական բժշկական քոլեջի ավարտական

կուրսի ուսանողների համար ծրագրի բուժքույրերն անց են կացրել «Հիվանդի խնամք» թեմայով 18-ժամյա դասընթաց, ինչն իր մեջ ներառել է ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ: Դասընթացի մասնակիցները հնարավորություն են ստացել շահառուների բնակարաններում անցնել պրակտիկա՝ առավել ամրապնդելու համար ստացած գիտելիքները:

- Նոյեմբերի 3-ին ծրագրի սոցիալական աշխատողը մասնակցել է «Արցախ 2020-2023. սոցիալական հիմնախնդիրները և սոցիալական աշխատողի քաղած դասերը» թեմայով գիտաժողովի:
- Դեկտեմբերին 1-ին ծրագրի սոցիալական աշխատողներ Անահիտ Սահակյան և Տաթևիկ Մկրտչյանը մասնակցել են Ագաթ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մատչելիություն, հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցելություն և շփում, խելամիտ հարմարեցում» թեմայով վերապատրաստման դասընթացին, ստացել հավաստագիր:
- Դեկտեմբերի 14-15ին իրականացվել է ծրագրային թիմի աշխատանքային հանդիպում, որի ընթացքում աշխատակիցները մասնակցել են «Արդյունավետ հաղորդակցում շահառուների հետ, էթիկա և թիմային աշխատանք», «Ինչպես օգնել առանց վնասվելու. ինքնախնամք և ինքնակարգավորում», «Հանրային կապեր, հաղորդակցում: Հաջողության պատմությունների մշակում» թեմաներով դասընթացների, ամփոփվել են տարվա ընթացքում կատարված աշխատանքները և պլանավորվել առաջիկա անելիքները:

**Շահառուներ****

| N | Անուն, ազգանուն | Բնակության հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ջիլդա Մկրտչյան | Գյումրի, Վ. Սարգսյան, 6շ. Բն.15 | 098 18 10 67 | 7901490098 | |
| 2 | Անահիտ Խալաչյան | Գյումրի, Անի թ, Շահինյան շ.3 բն. 1 | 077 00 32 35 | 5107348262 | |
| 3 | Սերյոժա Մամաջանյան | Գյումրի, Անի թ. 11փ. շ. 7 բն. 15 | 6 13 59 | 2002490260 | |
| 4 | Հովհաննես Շահինյան | Գյումրի, Վ.Սարգսյան, շ10ա, բն. 44 | 077 58 36 56 | 1107462070 | |
| 5 | Սուրա Նիկողոսյան | Գյումրի, Իսահակյան փ. Տ.147 | 5.41.70 | 5115365944 | |
| 6 | Սպարտակ Իսկանդարյան | Գյումրի, Գորկու փ. 1նրբ. Տ. 99 | 094 42 43 29 | 1310450099 | |
| 7 | Մարիամ Հովհաննիսյան | Գյումրի, Ղանդիլյան 159/077 | 077 54 28 61 | 5116326853 | |
| 8 | Շուշիկ Կարապետյան | Գյումրի, Ղուկասյան փ. 115/041 | 093 91 81 39 | 7606410011 | |
| 9 | Կարինե Մկրտչյան | Գյումրի Շիրակացի, 211/226 տն | 077 846475 | 6412400044 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Մարուսյա Թադևոսյան | Գյումրի, Շիրակացի 389/098 | 098 165 720 | 5905410194 | |
| 11 | Լիաստան Առաքելյան | Գյումրի, Պուշկինի, 59ա, | 055 66 96 79 | 7502470312 | |
| 12 | Սվետլանա Հակոբյան | Գյումրի,Պ.Սևակ14շ.բն 20 | 093 25 74 23 | 6501380127 | |
| 13 | Վարդ Սաֆարյան | Գյումրի Բուլվարային թ.շ. 7, բն 36 | 098 28 47 09 | 5107411355 | |
| 14 | Լաուրա Նազարեթյան | Գյումրի, Պարույր Սևակ, 18շ. Բն 42 | 098 45 02 37 | 8108450020 | |
| 15 | Շնորհիկ Շահինյան | Գյումրի, Վարդ բաղ 4-րդ թ. Շ. 6բն.9 | 094 79 71 89 | 7408460373 | |
| 16 | Լևոն Փիլոյան | Գյումրի, Վ. Սարգսյան, 213/205 | 098 81 10 57 | 3712550286 | |
| 17 | Լիլիդա Ղազարյան | Գյումրի, Գորկու փ. Շ.104 բն.58 99 | 094 62 66 72 | 6308390054 | |
| 18 | Օֆիկ Ղազարյան | Գյումրի, Ավտոկայան, 121/168 | 093 23 22 97 | 5105420020 | |
| 19 | Սուսաննա Սարգսյան | Հալաբյան փող. 13 շենք, բն. 2 | 077 604 691 | 8010470066 | |
| 20 | Անահիտ Պապիկյան | Գյումրի, Երևանյան Խճ 140/028 ա | 094 74 21 12 | 5212500141 | |
| 21 | Էդիկ Մելքոնյան | Գյումրի, Աբովյան 1Նրբ,ա.76 | 5 07 19 | 3507580659 | |
| 22 | Ասյա Հովհաննիսյան | Գյումրի, Շչերբինա փ. 6ա շ. Բն. 29 | 094 57 36 74 | 7011390189 | |
| 23 | Լալա Բեժանյան | Գյումրի, Տերյան 59 | 077 60 14 71 | 6205400103 | |
| 24 | Ռոզա Մարտիրոսյան | Գյումրի, Ղանդիլյան Փ 47շ. Բն 55 | 093 69 03 77 | 5203450021 | |
| 25 | Լիդիա Մուրադյան | Գյումրի, Մուշ 2, 3 թաղ Քոթեջ 18; Երև Խճ. Քոթեջ 1 | 6.54.62 | 1114330086 | |
| 26 | Մարգարիտա Կաբացից | Գյումրի, Ռեպինի 215/102 | 5 30 71; 098 01 76 36 | 7308450104 | |
| 27 | Սուսաննա Մարանջյան | Գյումրի, Վ. Սարգսյան 6 շ.բն 33 | 6.67.60; 077 26 52 59 | 6211610475 | |
| 28 | Սամվել Նազարյան | Գյումրի, Ղորղանյան 147 | 5.83.56;099 36 76 91 | 1508510202 | |
| 29 | Մարիամ Հովհաննիսյան | Գյումրի, Ռոզի Խանութի մոտ 229/245 | 098 950 249 | 6008450256 | |
| 30 | Հովհաննես Գրիգորյան | Գյումրի, Անի, 5-րդ Թաղ10ա շ. Բն. 1 | 099 65 15 34 | 3514550018 | |
| 31 | Մարո Մխիթարյան | Գյումրի, Աթարբեկյան 121ա | 5 44 31 | 5105400348 | |
| 32 | Ելիզավետա Մկրտչյան | Գյումրի, Տ. Ճարտարապետի շ.4, բն.6 | 093 697 027 | 5111510109 | |
| 33 | Սերգեյ Ծատուրյան | Գյումրի,Կոշտոյան 227 / 314 | 098 5181 67 | 2608490190 | |
| 34 | Աստղիկ Վարդանյան | Գյումրի, Անի 58, Չարենցի փ.1շ. Բն. 4 | 093 96 01 58 | 7214500108 | |
| 35 | Ռուդիկ Սարգսյան | Գյումրի, Գարեգին Ա.Վ.12ա շ. Բն.4 | 094 49 03 50 | 1510460128 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 36 | Մարիամ Կարոյան | Գյումրի, Խրիմյան Հայրիկ 237/703 | 098 38 13 17 | 6309450018 | |
| 37 | Յուրա Մելիքյան | Գյումրի, Գարեգին Նժդեհի | 094 42 08 56 | 2107520011 | |
| 38 | Հեղինար Գասպարյան | Գյումրի, Գ. Նժդեհի 20շ. Բն 10 | 093 480686 | 6408490093 | |
| 39 | Անուշ Մինասյան | Գյումրի, Գ. Նդեհ 2 շ. Բն 10 | 098 25 50 59 | 8914470081 | |
| 40 | Սամվել Հովհաննիսյան | Գյումրի, Ավտոկայան, 104/529 | 093 45 01 98 | 3103570023 | |
| 41 | Մարուսյա Գրիգորյան | Գյումրի, Ղուկասյան փ. 115/028 | 093 24 14 68 | 6311480026 | |
| 42 | Բենիկ Գրիգորյան | Գյումրի, Տ. Ճարտարապ, 14ա շ.բն 7 | 094 02 80 13 | 2302800303 | |
| 43 | Ծառիկ Մկրտչյան | Գյումրի, Չարենցի 13 ա շ. Բն.1 | 094 13 78 66 | 7201590170 | |
| 44 | Ժենյա Գևորգյան | Գյումրի, Վ սարգսյան շ 8ա բն ձ | 077-53-75-15 | 6905400157 | |
| 45 | Նունե Գևորգյան | Գյումրի, Ղուկասյան շարք, 15, բն 9 | 094 117 816 | 7804680023 | |
| 46 | Մարի Այապինա | Գյումրի, Պ.Սևակ 18 շ. Բն.52 | 098 63 57 61 | 7502310053 | |
| 47 | Ասյա Պողոսյան | Գյումրի, Մանուշյան 230/312 տն | 094 967 814 | 6708380013 | |
| 48 | Նինա Կյուրեղյան | Գյումրի, Ռուսթավելու փ. տ. 42 | 094 78 43 18 | 7404550092 | |
| 49 | Ասլի Ալեքսանյան | Գյումրի, Երևանյան Խճ 55շ. Բն.3 | 094 08 24 84 | 6511300021 | |
| 50 | Նորայր Աղայան | Գյումրի, Շահումյան փ. Տ 18 | 094 73 6520 | 1201541530 | |
| 51 | Ռոզա Կապրիելով | Գյումրի, Երևանյան Խճ Քոթեջ 32 | 093 91 69 46; Վալերիա 077 42 51 93 | 5105420241 | |
| 52 | Օլգա Թորոսյան | Գյումրի, Ղուկասյան 8 շարք,տ. 19 | 5.63.81; 055 73 84.60 | 7512360533 | |
| 53 | Անահիտ Ջունդալյան | Գյումրի, Տ. Ճարտար, 26շ.բն.5 | 6.39.55; 094 338743 | 5107311792 | |
| 54 | Տոսյա Ներսիսյան | Գյումրի, Սպանդարյան փ. Տ. 49 | 077 15 17 45 | 5115381761 | |
| 55 | Թամարա Մինասյան | Գյումրի, փ. Պուշկին, տ 88 | 098 48 26 20 հարևան | 6412410120 | |
| 56 | Էմմա Բուրչակյան | Գյումրի, Տերյան 35 | 5.39.69 | 5209470059 | |
| 57 | Հայկազ Աղաբեկյան | Գյումրի, Շիրակացի 209/114, | 093 83 78 31 | 1104520885 | |
| 58 | Դավիթ Բարսեղյան | Թետչերի փ. 9/8 տուն | 077 78 95 47 | 2811490248 | |
| 59 | Գոհար Կուրդինյան | Գյումրի, Աթարբեկյան 3-րդ նրբանցքտ. 3/1 | 093 63 05 17 | 5501450033 | |
| 60 | Սալվի Հովհաննիսյան | Գյումրի, Երևանյան Խճ 17. բն.16 | 098 00 39 94 | 7504370045 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 61 | Կարապետ Հովհաննիսյան | Գյումրի, Աթարբեկյան փ. Տ 74 | 093 40 17 32 | 3608390128 | |
| 62 | Շուշիկ Թորոսյան | Գյումրի, Լ. Մադոյան փ. տ.155 | 5.59.12 | 6801390112 | |
| 63 | Սոֆյա Մնացականյան | Գյումրի, Սպարտակի փ. տ. 16 | 094 56 33 13; 4.77.28 | 8110530044 | |
| 64 | Նադյա Բաղդասարյան | Գյումրի, Երևանյան խճ, 142շ.բն. 1 | 093 48 60 01 | 7812410099 | |
| 65 | Գրիգոր Եղիազարյան | Գյումրի, Անտառավ III թ.25ա շ.բն 44 | 094 96 14 69 | 1115384007 | |
| 66 | Գրետա Նազարյան | Գյումրի, Տ. Ճարտարապետի շ.32, բն.2 | 098 03 23 34 | 5111510044 | |
| 67 | Լուսյա Սուքիասյան | Գյումրի, Գերցենի 5-րդ նրբ. Տ26 | 093 70 64 48; 3.45.97 | 6007410177 | |
| 68 | Դերենիկ Հակոբյան | Գյումրի, Նար-Դոսի փ. 41 | 077 44 29 48 | 2311350021 | |
| 69 | Սուսաննա Սարգսյան | Գյումրի, Երևանյ. Խճ. 67շ, բն. 4 | 4 56 64 | 5910390023 | |
| 70 | Ռուզաննա Տոնոյան | Գյումրի, Շիրազի փ.20շ. Բն 1 | 094 66 10 61 | 7509550319 | |
| 71 | Սաթիկ Գևորգյան | Գյումրի, Անի 13փ. 6գ շենք բն.3 | 094 61 96 23 | 5903490026 | |
| 72 | Ժենյա Մարգարյան | Գյումրի, Սպարտակի փ. տ. 5 | 094 96 27 16 | 6507240060 | |
| 73 | Անահիտ Ասոյան | Գյումրի, Տոլստոյի փ. 36շ. Բն.1 | 077 55 07 70 | 5409450019 | |
| 74 | Հռիփսիկ Ղոչոյան | Գյումրի, Ֆանտան, 228/ 249 | 094 21 28 35;5.30.71 | 6703390053 | |
| 75 | Սոֆիկ Թորոսյան | Գյումրի, Ղուկասյան 8-րդ շարքտ. 19 | 055 73 84 60 | 7003520397 | |
| 76 | Ալեքսեյ Պետրոսով | Գյումրի, Երևանյան խ. Տ.16 | 055 161 238 | 2612380035 | Մահացել է 28.03.2023 |
| 77 | Սեդա Սերոբյան | Գյումրի, Ավտոկայ Տար, 104/765 | 096 44 26 36 | 6312380076 | Մահացել է 07.05.2023 |
| 78 | Զոյա Մելիք-Սարգսյան | Գյումրի, Շիրակացի 62.բն30 | 098 64 87 | 6210470165 | Ապրիլին վերադարձ ընտանիք |
| 79 | Սվետլանա Գաբրիելյան | Գյումրի, փ. Զուղայի տ 7/16 | 077-25-98-59 | 6709530213 | Ապրիլին վերադարձ ընտանիք |
| 80 | Մանյա Թագվորյան | Գյումրի, Գ.Նժդեհ 13շ.բն 27 | 094 19 38 10 | 6012380054 | Սեպտեմբերին տեղափոխվել է ծերանոց |
| 81 | Ստեփան Աղասյան | Գյումրի, Գ. Նժդեհ 6-րդ շ. Բն.12 | 098 81 31 40 | 1801390215 | Մահացել է 14.09-ին |
| 82 | Աբետնակ Շախբազյան | Գյումրի, Մազմանյան փ. 20/1 բն | 094 53 91 04 | 2001380801 | Սեպտեմբերին վերադարձ ընտանիք |
| 83 | Ռազմիկ Գևորգյան | Գյումրի,207/390տնՄարտի 8-ի փ.Չերք ձոր | 5 65 90; 077 53 75 15 | 6905400157 | Մահացել է նոյեմբերին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 84 | Մոմիկ Մինասյան | Գյումրի, Գ. Նժդեհի 20շ.բն1 | 077 29 33 83 | 7903400010 | Մահացել է դեկտեմբերին |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| 40 | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/75 (Ծրագրի ողջ ընթացքում՝ 84 շահառու) |
| 1.1 | այդ թվում՝ կին | 58 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 68 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –8<br>Բ - 67 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 75 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 75 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>• լվացքատուն | 40 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան ____________

09.01.2023 թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.